| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | Նախագծերի մենեջեր |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, ՀՀ |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ | 07/02/2025 |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 21/02/2025 |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Անորոշ ՝ 3 ամիս փորձաշրջանով |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա Թվային բանկինգի թիմին որպես Նախագծերի մենեջեր:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախաձեռնել նոր նախագծեր, վերանայել նախագծերի նախաձեռնման հայտերը և ապահովել փորձաքննական եզրակացություն,
- Սահմանել և հստակեցնել նախագծերի շրջանակը և նպատակները և ներգրավել շահագրգիռ կողմերին,
- Կառավարել նախագիծը նախաձեռնողների և բոլոր շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը,
- Հաստատել և պահպանել կապեր երրորդ կողմերի հետ,
- Մշակել և պահպանել տեղեկատվական տեխնոլոգիաների պլանները, որոնք նախանշում են ծրագրի կարգավիճակի անհատական առաջադրանքները, հիմնական կետերը, ավարտի գնահատումների և ռեսուրսների բաշխումը,
- Համակարգել ներքին ռեսուրսները և երրորդ կողմերին նախագծերի սահուն իրականացման նպատակով,
- Ապահովել բոլոր նախագծերի ժամանակին կատարումը համաձայն սահմանված շրջանակի և բյուջեի և ապահովել դրանց տեխնիկական իրագործելիությունը,
- Ապահովել նպատակներին, կազմակերպական քաղաքականություններին, ընթացակարգերին և չափանիշներին համապատասխանությունը,
- Նախապատրաստել համապատասխան Տեխնիկական առաջադրանք հիմնվելով տրամադրված տվյալների և վերլուծության հիման վրա:
- Տրամադրել Տեխնիկական առաջադրանքները գործընկերներին և վերահսկել կատարման ամբողջ գործընթացը:
- Կատարել նախնական թեստավորում առաջադրանքների որակի ապահովման նպատակով,
- Համակարգել արտադրական թողարկումների համար նախատեսված Տեխնիկական առաջադրանքների ցանկը
- Հաշվետու լինել և բարձրաձայնել հարցերը ղեկավարությանն ըստ անհրաժեշտության,
- Իրականացնել նախագծեր նախագծերի կառավարման տարբեր մեթոդոլոգիաներով
- Բիզնես պահանջների գնահատում, ուսումնասիրություն և վերլուծություն

- Նախագծի հետ կապված ռիսկերի գնահատում և վերլուծություն
- Բիզնես կարիքների, առաջնահերթությունների գնահատում, բիզնես դեպքերի սահմանում, բիզնեսին վերաբերվող հարցերի  կառավարում
- Բիզնես միավորների, մասնաճյուղային ցանցի , նախագծերի ղեկավարների և ճարտարապետների հետ համագործակցություն
- Մշակված կիրառական ծրագրերի փորձարկում և գնահատում

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն, SS համակարգերի, տնտեսագիտության կամ հարակից ոլորտում
- Նվազագույնը  2 տարվա աշխատանքային փորձ որպես SS նախագծերի կառավարիչ
- ֆինանսաբանկային ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ
- Հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի բավարար իմացություն
- Գրավոր և բանավոր հաղորդակցման բարձր ունակություն՝ ներառյալ տեխնիկական փաստաթղթերի վարման ունակություն:
- MS Office փաթեթի գերազանց իմացություն
- Jira, ServiceDesk գործիքների, SharePoint պրոդուկտների և տեխնոլոգիաների հետ ծանոթ լինելը կդիտվի որպես առավելություն,
- ԼՍոֆտ-Բանկ համակարգի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի բավարար իմացություն
- Վերլուծական մտածելակերպ և խնդիրներ լուծելու ունակություն
- Կազմակերպչական և թիմային աշխատանքներ կատարելու ունակություն
- Հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի բավարար իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝

անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/110 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/